

Խաչատուր Աբովյան

Պարապ վախտի խաղալիք

Մոլլա Մասրադնի իշի քուռակը

Իշի քուռակն վերջն էշ կը դառնա,
Ամարաթում, թե գոմում մեծանա:

Մոլլա մասրադինն շատ բան էր արել,
Ինքն ախմախացել, ուրըշին խաբել,
Բայց նրա հունարքն իշի քուռակին
Իր իշությունից էլի չի դարձրին:
Մայիս ամիսն էր, օրերն քաղցրացել,
Իսան ու հայվան սար ու ձոր բռնել,
Ամենի արինն նոր էր եռ ընկել,
Ամենի սիրտը էլ եդ նոր բացվել:
Մեկ քած էշ էլ իր քուռակն քամակի՛ն
Քցած՝ հանդումը նայում իր քեֆին.
Ինքն թավալ տալիս ախպումն ու զռում,
Քուռակն էլ պոչը ցցած՝ մոտն խաղում:
Մոլլեն որ իր սուրբ ղուռանիցն ավել՝
Ուխտը ուլիցը չէր կարող ջոկել,
Նրա չափ ընկնիլն որ աչքովն ընկավ,
Ելած ուշք ու միտքն էլ նրա հետ թռավ:
«Զահել վախտն էսպես որ հո՛ւնար ունի
Էս օրհնած գառը, ու փախչիլ գիտի,

Որ մեծանա հո՝ աշխարք կարմացնի՛,
Երբ տակիս՝ նստած՝ էսպես չափ քըցի»:
Գողացավ քուռակն, տարավ գոմն կապեց:
Էշն լեզու չուներ, խելքը ո՞վ տվեց,
Որ տիրոնչն ասի քուռակի տեղը,
Մոլլեն էլ գիժ չէր, ասեր, դառնար գողը:
Էսպես տանը կապեց, ո՛չ թե խոտ, խոռակ,
Չամիչ ու խուրմա ուտեր մեր քուռակն:
Արև ու անձրև աչքը չը տեսավ,
Թոզ ու ախպ, փալան, ո՛չ բեռը տարավ:
Էսպես պահելուցն ելած զըվաթն էլ
Պակսեց: Մեր թամբալ քուռակն մեծացել
Իր իշի բոյը, իր իշի հասակն առած:
Վախտն էր, որ տեսնին Մոլլի փառքն:
Մեկ ազիզ օր էլ որ եկավ, հասավ,
Մոլլեն էլ լավ իր թադարեքն տեսավ:
Ու տնկտնկալով, քամի կուլ տալով,
Իշի քամակին բազմած խիստ քեֆով:
Նոխտի փոխ՝ չաթու, թամքի տեղ փալան
Իշի դունչն ու վրեն դրած՝ էկավ մեյդան.
Որ ջիրիդ խաղա, քանի ինքն սաղ ա.
Բայց էշ ու ջիրի՞դ ա՛յ Մոլլա Աղա:
Ձիանքն էլ մնացին հուշտ էլած, սառած,
Չէ թե ձիավորքն՝ բերանները բաց:
Մոլլեն ամենի սիրտն առավ, ասեց,
Որ իրան նայեն, ու էշը քշեց:
Քոռաղադինա էն օրը շոք էր,
Ջիրիդի տեղն էլ ախպսին մոտ էր:
Թո՛շ, թո՛շ կանչելով՝ խեղճ Մոլլեն բերանն
Պատռեց, բայց իշի ղուղը չի մտան:
Բերնով օրհնում էր, ոտով վեր հատում,
Գլուխը սղալում, եղևիցն բզում,
Բիզն էլ բեզարեց, քարն էլ, քացին էլ,

Բայց կակող ախպուսն իշի խելքն առել:
Փռվեց չորս ոտովն էն տեղ իր քեֆին.
Ո՛չ ծեծին նայեց, ո՛չ Մոլլի միրքին:
Տեսնողք փոր, բերան բռնած՝ քաշվեցին,
Մոլլեն զոռ տվեց ուշունցի պարկին:
Բայց խելոքի մեկն ղրաղ քաշեց նըրան,
Ու կարթաց գլխին սաղ սրհաթ ղուռան,
«Ով իշին կուզի նոր մարիֆաթ տալ,
Աստված գիտենա, ի՛նքն ա էշն հալալ»:—